

Բ. ՆԱԽԱՊԱՅԱՐՄՈՒՆՔՆԵՐ

1, Եղոսան հարսիկը լաւ «քետտակ» կընկնի. նա «Փատիշահ Աւետարանի դուռն է, նրան տուած ուրիշ է, առածները ոչ մէկը սուտ չի գուրս գայ. Բեատակ ընկած ժամանակ, իւրաքանչիւր գաղտնի նպատակ ունեցող կին, նրա ձեռքը մի բոլեւաշափ կը բռնէ ու թողնելով՝ մօտը կը կանգնի, որ իմանայ թէ «Աղէն» (սուրբը) իւր խորհրդի ու մտքի իրագործման ու կատարման համար ի՞նչ կ'ստէ... Յանկարծ կ'իսացնոր քետտակը փոքր ինչ կ'սթափի ու զառանցելով ամենին մի բան կ'ստէ: Որին կը հրամայէ, որ այս ինչ հօտի մէջ մի ճնտրիկ սե կամ սպիտակ ոչխար կայ, դնայ բեր մատաղ արա՝ մուրաղիդ կը հասնիս: Որին էլ թէ՛ մինչև 7 անգամ բորիկ ոտքով Աղի դուռը չ'գա՝ մուրաղդ չես առնի...: Սոյն ձեռով ամենին յարմար մի բան կ'ստէ: Բայց Եղոսանի քետտակ ընկնելը հանաք մասխարութիւն չէ. նա ինչ որ գուշակեց ու ասաւ՝ անթերի պիտի կատարուի, եթէ ոչ՝ Աղէն տառը տեսակ պատրիժ կը թափէ իւր հրամանները իսկութեամբ չը կատարողի գլխին:

2, Հոռոմ քուրիկը լաւ «նետ» դնել գիտէ. ցաւի ու դաւախ տէր կանայք հաւաքուել են նրա մօտ: Վեր է բերել իւր նետ դնելու ալիւրի մաղը, մեծ գլխով մեխը ամրացրել է մաղի կողին և երկու ցուցամատով բարձր պահել է ու սպասում, որ կանայք ձեռքերը քսեն մաղին ու մտքերումը խորհրդածեն, որպէս զի այնուհետև ինքն իւր գործն սկսէ...: Դիւի բաշին ձեռքը քսում է մաղին և որ սրբից ու Աւետարանից որ կարծում է որդու, ամուսնու և իւր հիւանդութիւնը, նորա անունը մտքումը պահում է: Ապա Հոռոմ քուրիկը ցուցամատերով մաղը բարձրացնելով ասում է. — «Եմ, քեզի մեռնիմ Հալիւր Աւետարան, դու Կարօյի ցաւին մէ իլլածըմ էնես»։ Բայց մաղը ամենեին իւր դերքից չի շարժվում: Այս ձև խնդրուածքներով, աղաչանքներով ու բարեմաղթութիւններով մի քանի սրբոց ու Աւետարանների անուն տալով մաղը բարձրացրեց, բայց դարձեալ նոյն անշարժ դրութեան մէջն է: Վերջ 'ի վերջոյ ասում է. — «Դէ՛ մեռնիմ քեզի Կօշայ զինաւոր սուրբ Դէորդ, ճար ու իլլածը քեզի մնաց, դու գիտես... Կարօյի ցաւին մէ փառատութենըմ տուր, որ լաւցաւ՝ մատաղով, խունկ ու մօմով, եայան քու դուռդ գայ — լուսաթաթախ գերեզմանդ համբուրէ...» Դեռ խօսքը չ'վերջացրած՝ մաղը կտկսի փոքր ինչ այս ու այն կողմ ճօճալ. երբ ուխտ ու խնդրուածքը վերջացրեց՝ այն ժամանակ

կսկսի ֆուտալով, մինչև անգամ մէկ մատի ծայրին՝ պտտելի։ Մի և նոյն խօսքերը երեք անգամ կը կրկնէ, մաղն էլ երեք անգամ նոյն ձևով կը պտտի։ (Մի և նոյն գործողութեան երեք անգամ կրկնելը, ապացուցութեան և հաւաստի լինելու նշանն է)։ Դրանով կիմանան թէ՛ լսողն Կարօյի ցաւը, որ սրբի տուածն է...։ Այն սրբերը, որ մեզ համար միշտ բարեխօսում են, այսօր նախապաշարման շնորհիւ, բամբակում են, թէ մարդի ցաւ են տալիս։

3, Կալերի Մաքէն լաւ թիղ՝ կը չափէ. գնանք նրա մօտ տեսնենք թէ՛ մեր կորուստի համար ինչ կասէ։ «Յօրքուր Մաքէ, մէկ թիղըմ չափէ տեսնենք մեր կորուստն սում քովն է»։ ասաց Մայրամ խաթունը...։ Յօրքուր Մաքէն թիղը մի քանի անգամ յետ ու առաջ տարաւ—բերեց, բայց «կարճ» եկաւ։ Միւս անգամ որ թիղն ուժով վրայ բերեց ու կուշ արած մատները լայն բացեց՝ մէկ ձեռքը բարձրացաւ միւսի վրայ։ «Ախշի Մայրամ, կորուստդ մալ է, ապրանք է, ինչ է՝ չեմ գիտի։ հրմա, Աստու կարող գորութիւնով շատ թէզ կը գրտնուի, հէջ դարտ մի էնէք։ Տեսնը թիղս ինչդ էրկնցաւ... անհմ մէկ էլ չափեմ տես, որ հաւատաս»։ ասում է ու սկսում նորից թիղ չափել։ Մայրամը տեսնելով որ թիղը այս անգամ իւր կարծածից աւելի երկարեց՝ շնորհակալութիւն անելով՝ վարձահատոյց եղաւ Մաքէին և ուրախ ու յուսալից որտով վերադարձաւ տուն։ Բայց կորուստը դարձեալ մնում է յաւիտենական ու անվերադառնալի։

4, Յօրքուր Մաքէն «գարի գցել» էլ գիտէ. երկու շնորհքն էլ Տիրամօր տուածն է։ Նա իւր թաշկինակի ծայրում պտտրաստի կապած ունի եօթը հատ գարի, որոնք առանձնապէս նշան արած են։ Այդ գարիների 3 հատի ծայրը կտրած է. որոնցից մէկը նշանակում է կորուստը, միւսը կորուստի տէրը և երրորդն էլ գողացողը. իսկ մնացած չորսը, որոնք ամբողջ են, նշանակում են այլ և այլ մարդիկ...։ Խնամի Սովկիլը խնդրում է, որ իրանց կորուստի համար «գարի գցէ»։ Յօրքուր Մաքէն, որ միշտ պտտրաստ է իւր ծառայութիւնը մատուցանել այլոց՝ բաց արաւ թաշկինակի ծայրը, գարիքը լցրեց ափի մէջ և միւս ափը վրայ բերելով՝ սկսեց փակած ձեռքերը, մի քանի անգամ ցնցելով, ծնկանը խփել ու բաց արաւ։ (Իհարկէ, որ ձեռքերի շարժումից ու ցնցումից՝ գարիքը միմեանցից անջատվում ու որոշվում են, կամ այս ու այն դիրքն ստանում)։ «Ահա տես, խնամի Սովկիլ ջան, գողը կուզէ ձեռ մալը բերէ տայ, հրմա էս էրկուսը մէջ են առել՝ չեն թողնի... կեցիր մէկ էլ գցեմ»։ Նոյն ձևով կրկնում է գարի գցելը։ «էս անգամ էլ տես, մէկ ընկերը հեռեցաւ, մէկը մնաց բովը»։ Երրորդում է գործողութիւնն՝ Աստուծոյ կարողութեանն ու սրբոց բարեխօսութեանը գիմեկով։ «էս անգամ էն մնացած մէկ չար

մարդն էլ հեռեցաւ ու գողը թաք մնաց. Աստըծով դու հլա տուն չ'հասած՝ կորուստդ բերեն կուտան, հէշ թալաշ մի էնի...»։ Այսպիսի յուսադրական խօսքերով ճանապարհ է գցում Սովիկւին. բայց անիծած փոքրոգի գողը չի էլ գժվում, որ իւր գողացած իրեղէնները բերէ յետ տայ։

5, Խանամիրենց Պուրուճը, որի շնորհքը «Յիսն անունն» է տուել, թէ «աղօթել» գիտէ ու թէ «վախ» բռնել... նրա աղօթքը քնասկիւն է—մէկէն ի մէկ ցաւը դանակի պէս կը կտրէ։ Այդ պատճառով է՝ ամեն օր նրանց տուն ու դուռը առաւօտանից մինչև իրիկուն լիքն են։ Որի երեխան վախեցել է՝ կամ նրան է բերել վախը բռնել տալու, կամ վախեցողի գօտիկը։ Որի մարդու կամ որդու գլուխն է ցաւում, նրանց գդակն է բերել աղօթել տալու։ Որոնք էլ՝ իրանք են վախեցել կամ գլխներն է ցաւում, եկել են բժշկուելու (Աղօթելն ու վախ բռնելը մեղանում ընդունուած է իբրեւ բժշկական միջոցներ)։ Պուրուճ Ապլան այնքան գործ ու դրամուճ ունի, որ շատ ժամանակ ամբողջ օրը անսուղ ծոմ ու պաս է մնում, որովհետեւ չի կարողանում գործից աչք բանալ...։ Մէկին չօրացրել կամ նստացրել է առաջը, ինքը դանակը կամ մենծ ասեղը ձեռին այնպէս սարսափելի արշտոտալով ու շուտ շուտ թմւ, թմւ անելով, մի կողմից էլ ձեռքի ասեղով ստէպ ստէպ խաչակնքելով աղօթում է, որ քիչ է մնում թէ՛ բերանը պատռուի ու Նևիթանը իւր ամբողջ բանակով ներս գնայ։ Աղօթելիս շուտ շուտ կրկնում է. — «վճւյ, քօռանայ էդպէս աչքը. կապուտ — չախալ — չար աչք է գիպել, աղէն նազար է առել։ Թէ որ քիչըմ էլ ուշ բերէիք՝ աղէն բանէ պրծնիր կը, էլ իլլաճ չէր մնայ վրէն...» ասելով՝ ասեղը երեք անգամ քաշում է հիւանդի բերանը, կամ խաչակնքում ու արձակում է։ Սոյն ձեռով էլ գդակներն է աղօթում ու տալիս տիրոջը։ Երբեմն «աղ ու հաց» էլ է աղօթում, որ աչք առած տաւարներին են տալիս։

6, Այժմ հերթը վախեցողներինն է։ Վախեցողի գօտիկ մէկ ծայրից ինքն է բռնում, միւս ծայրից վախեցողը կամ նրա մայրը, սկըսում է աղօթել ու կանգունով բռնած գօտիկը, ձեռքը թարս ու չիտակ դարձնելով՝ չափել։ Թէ որ կանգունը վախեցողի բռնած ծայրից շատ այն կողմն անցաւ՝ այն է որ շատ է վախեցել. իսկ եթէ քիչ անցաւ, կամ հաղի վախեցողի ձեռքի երեսին հասաւ՝ քիչ է վախեցել։ (Ի՞նչ կարծիք որ, այնպէս վարպետութեամբ պիտի շարժէ կանգունը, որ ցոյց տայ թէ՛ շատ է վախեցել)։ Երեք անգամ վախը բռնելուց յետոյ, գօտիկը կուլուած երեք անգամ էլ կուրծքին ու մէջքին կը խփէ և կը պատուիրէ, որ երեք օր իրար վրայ գալ վախը բռնել տալու, որ ցաւը վրէն չը հաստատուի։

7, Այսօր հրապարակի վրայ — ժողովրդի բերանում մի անասելի ու մեծ սուտ է պտտվում. անշուշտ «բոյախանի կարաս է աւիրած»։ Այդ կարասի ներկը շակեւու համար՝ կարեւոր է մի սուտ հնարել ու այստեղ — այնտեղ խօսել. եթէ ոչ ուրիշ միջոցաւ չի կարելի այդ վնասը առաջն առնել։

8, Երբ մասնը երեւէրը «լուսնուց առած» կամ «վերնուց» կը լինին. և նոյն իսկ հասակաւոր կանայք «լուսնոտութիւն» կուենենան, նրանց միակ բժշկութեւս միջոցը «բոյախանի կարասն» է։ Գիրականութեան երեկոներին երեխանց գրկած, մի գոյգ մեղրամոմ էլ հետը, կը տանեն կարասի վրայ. երեսները խաշակնքելով ու կարասի շրթունքը համբուրելով, մոմերը կը վառեն կարասի հանդէպ։ Քեռի — Յակոն (վարպետը) կգայ, կարասի մէջ եղած լեղակի կապուտ փրփուրով երեխի ճակատը, այտերը, ծնօտը, բերանն ու բերանի մէջ — վերի դամաղը խաշաձե կը դրօշմէ։ Այս մի և նոյն դրօշմը անփոփոխ կերպով, հաւատաւոր լուսնոտ կանայք, կ'ստանան նոյնպէս բոյախանում։

9, Զըվոտ. — ժողովրդի մէջ մի սովորութիւն էլ կայ, որ երբ Փետրուար ամիսը վերջանում է և հետեւեալ օրը Մարտի մէկն է, նոյն երեկոյին մի ամանով լիքը ջուր դնում են տան դռն շէմի վրայ, ու մի քանիսը ձեռներին բռնած պարկ, շորեր և փալասներ սկսում են տան պատերին ու անկիւններին շարունակ ծեծելով ասել. «Զըվոտը՝, դուրս՝ Մարտը ներս»։ Այս միջոցին, եթէ շէմի վրայ ամանով դրած ջուրը թափուեց՝ կիմանան որ Զըվոտը տանից դուրս գնաց. (Ջրի թափուելը՝ Զըվոտի տանից դուրս գնալու նշանն է)։ Իսկոյն դռները խաշակնքելով ամուր կը փակեն։ Զատերը մինչև անգամ, իբր ականատես՝ պնդում ու հաստատում են, որ նոյն երեկոյին իրանք աչքերովը տեսած են իզել այդ Զըվոտներին մի տեղ ժողովուած լաց լինելիս. ու պատճառը հարցնելով՝ պատասխան են ստացել թէ, «մենք ձեզ ինչ էինք անում, կամ ինչ վնաս տալիս, որ մեզ այս ձևովը դուրս արկը»։ Բացի սրանից, նոյնպէս շատերն էլ, որպէս թէ փորձով, հաստատում են, որ այդ Զըվոտները Փետրվար ամսին տներից թանկագին շորեր տանում հագնում են և կեղտոտելուց յետոյ՝ կրկին վերադարձնում տեղը.

10, Աստուած մարդին որ ստեղծել է, նրա աջ ու ձախ ուտերին երկու պահապան. «բարի ու չար» հրեշտակներ է նստեցրել։ Որոնցից մէկը մարդու բարի գործերը «ճերմակ դաւթրի» մէջ կը գրէ. իսկ միւսը՝ «սև դաւթրի»։ Որովհետև դատաւորանի օրը պէտք է ներ-

1) Զըվոտ, ժողովրդի կարծիքով նշանակում է ռատանայ. իբր թէ այդ ռատանան իւր որդիներանց հետ կամենում են տան բոլոր ուտելիքներն ու իրողէնները սեփականել իրանց. ուստի ծեծելով տանից վաճառում են։

կայացնեն Աստուծուն, որ ըստ այնմ վճիռ տայ արքայութիւն կամ գոյութիւնը գնալու համար:

11, Մարդուս կեանքի մէջ պատահելիք բոլոր փորձութիւնները մէկ մէկ նրա ճակատի ոսկորի վրայ գրուած է...: Միթէ մարդու դանկ չէք տեսել, որ խաչաձև գրուած է. բայց բանն այս է, որ «Աստուծու գրած գիրը մարդ չի կրնայ կարդայ»:

12, Բացի այս, երկնքի անհամար աստղերը անտէր չեն. իւրաքանչիւր մարդի համար Աստուած մէկ աստղ է դրել երկնքում: Ինչքան որ առող կայ, նոյն թուով էլ մարդիկ կան աշխարհի մէջ: Երբ որ մարդ մեռնելու լինի, նրա աստղը մի օր առաջ երկնքից վայր կընկնի գերեզմանատեղի վրայ ու մարդի հետ կը մեռնի...: Փայլուն աստղերը հարուստներին ու մեծամեծ մարդկանցն են, իսկ խաւարները՝ աղքատներինը:

13, Լուսահոգի մամա պատմում էր թէ՝ «արեւն ու լուսինը քոյր ու եղբայր են»: Մէկ օր խօսակցութեան ժամանակ եղբայրը (լուսինը) իւր քրոջն (արեւին) ասել է թէ՝ «դու գիշերները դուքս արի, որ մարդիկ քեզ չ'տեսնեն, ամօթ է, որովհետեւ կնիկարմատ ես»: Իսկ քոյրը պատասխանում է, որ «ես գիշերները մենակ դուքս դալուց կը վախենամ. դու աղամարդ ես, գիշերները դու դուքս արի, իսկ ցերեկները ես»: Եղբայրը տեսնելով որ քրոջ ասածը ճշմարիտ է՝ համաձայնում է ու մէկ քանի բուռ ասեղ նրան տալով՝ պատուիրում է թէ՝ «ան այս ասեղները մօտդ պահիր, ով որ յանդգնի երեսօդ նայել (որովհետեւ՝ շատ աննման գեղեցիկ է). նրա աչքերը ծովածկէ»: Այն օրից կարգ է ընկնում, որ լուսինը գիշերն է դուքս դալիս, իսկ արեւը ցերեկը...: Երբեմն մարդկանց աչքերին խնայելով՝ չի ուզում ծովածրկել. այլ մտնում է ամպի տակ, որ երեսը չը տեսնեն:

14) Հէնց որ ամպը սկսեց գոռգոռալ — որոտալ ու կայծակին տալ, ծերունի Աբօն երեսը խաչակնքելով և Յիսուս Քրիստոս անելով կասէ. — «Կայծակը չարին պէտք է խփէ»: Նա հաւատացած է, որ կայծակը ոչ թէ բնութեան երևոյթներից մէկն է, այլ Աստուծուց նախասահմանուած մի պատիժ, որ Աստուած պատճառել է չարերի դիւին թօթափելու և նրանց աշխարհից բնաջինջ անելու համար:

1, Մի և նոյն մարդը առանց երկմտելու կասէ ու կը պնդէ, որ «արեւի և լուսնի խաւարումն ու երկրաշարժը մեղաց պատուհասներ են»: Աստուած այդ պատիժները մարդկային ազգին այն պատճառով է տալիս, որ մեղքերը միտք բերելով՝ դարձի դան: Ահա թէ ինչու համար է ասած. — «մեղաւորի մեղքէն՝ թմբի արդար»: Մեր անօրէնութեան մեղքից, այդ արդար ու անմեղ արարածների երեսներն էլ է սեանում ու խաւարում: Աստուած մեզ այնքան է սիրում, որ մեր մեղքը անբանների երեսովն է տալիս:

16, Պառաւ Նանէն կատուին շատ է փայփայում, փաղաքշում, սիրում ու կերակրում: Եթէ պատճառը հարցնելու լինիս՝ «հաւատամ խոստովանիմ, կը պատասխանէ, կատուն Քրիստոսի աղլուսն է»: Մեր Տէր Յիսուս Քրիստոսը մէկ անգամ մի տեղ հիւր է գնացած լինում. ճաշին հաց ուտելու ժամանակ, մկները նրա շորո կողմը շատ են պտրտովում ու անհանգիստ անում: Այդ պատճառով, Քրիստոս իր աղլուսը գցում է դէպի մկները, որը իսկոյն և եթ կատու է դառնում ու մկներին խեղդում—ոչնչացնում... Հէնց այդ է պատճառը, որ առում են թէ.— «կատուին սպանողը եօթը եկեղեցի պէտք է շինէ, որ նրա մեղքի տակից դուրս գայ ու փրկութիւն գտնի»:

17, Երածանը կամ Աղեղը «Աստծու կանանչ ու կարմիր գօտիկն է», ըստ ժողովրդական բացատրութեան, որ իր մեծ կարողութիւնը ցոյց տալու համար, գօտիկը երեցնում է՝ թէ արա տեսէք, այն՝ ինչ որ ես ունիմ, ոչ մէկդ չունիք ու չէք էլ կարող ունենալ:

18, Աբօյի պապը ժամանակոց «սատանայ է բռնել»։ արա թէ ինչպէս: Նրանք ունեցել են մէկ լաւ քեահլան ձի, որ ամեն գիշեր գոմի մէջ կապած տեղը քրտնելիս է եղել: Հարցնելով պատճառն իմացել են, որ սատանէքը գիշերները հեծնում ու շարշարում են: Վեր են առնում մէկ շոր, լաւ լազաթին սև ձթով կալում գցում են ձիու վրայ ու իրանք էլ ծածուկ տեղից հսկում: Մէկ էլ տեսնում են, որ արա՝ «քանց մեր աղէկներից» մէկը — սատանէն հկաւ նստեց ձիու վրայ ու սկսեց գոմի մէկ ծայրից միւսը անվերջ չափ գցել ու վռնտել: Այնքան ձայն չէն հանում, որ կուպրը տաքանում է ու սատանի շորերը կպչում՝ նրանից: Նոր առաջ է գալիս Աբօյի պապը, նրան տեսնելիս սատանէն թէև ուզում է վեր գալ փախչել, բայց չի կարողանում պոկ գալ, մնում է ձիու վրայ կպած — անշարժ. սատանին բռնում ու ետխէն (օձիքը) մախաթ կամ մենծ ասեղ խրելով՝ տանում տունը ծառայեցնում: Երբ սատանի ետխէն մախաթ խրեցիր, նրա թլըսումն այդ է, նա այլ ևս չի կարող աներևութանալ ու հաւատարմութեամբ միշտ կը ծառայէ մարդի:

19, Սատանի ոչ թէ միայն կրունկն է թարո, այլ և լեզուն էլ է թարս: Որովհետև, եթէ ասես—«գնայ ջուր բեր»՝ նա չի բերէ. իսկ եթէ ասես — «ջուր մի բերի»՝ նա կը բերէ: Մէկ անգամ էլ, երբ տանը ոչ ոք չի լինում բացի երեխից, սատանէն երեխին աղաչում է, որ մախաթը իրայ ետխից դուրս քաշէ: Երեխան չիմանալով բանի էութիւնը, միամտաբար դուրս է քաշում մախաթը: Սատանէն կանգնելով դրան մօտ անիծում է, թէ— «քանի աշխարհք կայ՝ այս տան գրգալների ու ամանների պռունկները միշտ կտորած լինին» ու աներևութանում է: Արդարև, ասում էր Աբօն, ես աչքս բացի—չբացի,

մեր տանը մի սաղ զգալ ու աման — չաման չ'տեսայ, բոլորի պառնակներն էլ կտարած էին:

20) Աբոյի քաւորը մէկ անգամ գիշեր ժամանակ ճանապարհ գնալիս, տեսնում է որ շօլի մէջ, մէկ հին ջաղացի աւերակի մօտ, հարսանիք կայ: Պանգնում ու յափշտակուած մտիկ է տալիս՝ թէ ումը պէտք է լինի: Մէկ էլ յանկարծ հարսանիքի միջից երկու աննման — հրեշտակի պէս կանայք դալիս են ու նրան հրաւիրում հարսանիք: Հրապարակելով նրանց գեղեցիկութիւնից՝ համոծայնում է. բայց ճանապարհին հարցնում է թէ՝ — «գութ ով էք ու այս հարսանիքն ումն է»: Նորա պատասխանում են, որ «մենք հիւրի - Փերի ենք ու հարսանիքն էլ մերն է»: Հարսնուհիներին մօտեցած ժամանակ տեսնում է, որ մէկ կողմում աշխարհքի բարութիւններով լիքը մէկ սեղանի վրայ հազարան տեսակ կերակուրներ կան ու դրանց հետ խառը դրուած է «անմահական խնժոքն ու գինին», որոնց ուտողն ու խմողը էլ յաւիտեան չի մեռնի: Միւս կողմը դավուլ գուռնայ, պար, խաղ խնդում և ալ ու խաշխաշ հագած — կապած, երկնային լուի Լտոր հարս ու աղջիկներ պար բռնած խաղում են: Թէ և ինքն էլ է ուզում դրանց մէջ մտնել խաղալ, բայց երեսը չի բռնում — ամանչում է: Մօտենում է սեղանին, որ էն անմահական գինուց մի քանի բաժակ լամէ, դուցէ թէ երեսը մի քիչ պնդի ու ինքն էլ կարողանայ դրանց հետ խաղալ: Բայց թեկցը բռնում յետ են քաշում թէ՝ մինչև որ երեք անգամ — «հացն ու գինին» — ճէր կենդանին» չառես, երգում չ'տաս ու մեղանից մէկին էլ կին չառնես, չես կարող ոչ ուտել և ոչ խմել: Յափշտակուած իր տեսածներէց՝ ճարհատեալ երգում է տալիս ու հիւրիներէց մէկին էլ կին առնում: Մէկ քանի տարի մնում է դրանց մէջ ու երկու զաւակ է ունենում: Վերջապէս մէկ օր էլ յանկարծ իր առաջին կինն ու որդիքը միտքն են ընկնում. ուխտ ու դաշինք ոտքի տակ տալով դժբութ է ու ծածուկ փախչում գալիս իրանց տուն և այն անմահական փառքերէց գրկվում: Աբոյի քաւորը պատմելիս է եղել, թէ «հիւրի - Փերիների բնակարանը միշտ հին աւերակներն են եղել. մանաւանդ ջաղացներն ու ձիթիհանքները: Եւ թէ, դրանց մէջ ամենեկին տղամարդ չի եղել, բոլորը կանայք են:

21, Մմեն տուն իր «գոլված» ու տանտէրն» ունի. այդ գոլվածք կամ տանտէրը՝ «օձն» է: Գիւղերում օձը տան մէջ համարձակ էլ ու մուտ ունի. ոչ որ նրան չը վնասեալուց դատ՝ նաև կերակրում էլ են: Մէկ անգամ Աբօն չիմանալով, թէ օձը տան գոլվածքն է, ներս մտած ժամանակ տեսնում է, որ մէկ աղբայել գազան օձ, երգիկից ներս ընկած արեւի շողքի մէջ կուտակուել — պարկել է: Չեռքի գաւազանով գութն է ձգում ու վռնտում է: Այն օրից մինչև այսօր՝ իրանց տան

դուլաթը խռովել է ու մօտ չի գալիս. իսկ իրանք էլ այն ընկնելն է, որ կարողութիւնից մէկ անգամ ընկել են ու այլ ես չեն դրսեւորում Թէ և երբեմնապէս դուլաթը գալիս աչքերին երևում է, բայց ինչ օգուտ՝ որ խռովել է ու ներս չի մտնում:

22, Աւագ հինգշաբթի — Քրիստոսի չարչարանաց ու խաչելութեան գիշերը. դարբինները անխօս գնում են իրանց կրպակները բաց անում, նախ մուրճով մի քանի հարուած տալիս են սաւերին (գազգահ) և ապա պողպատից — «անժրմի մատնիքներ» չինում ու սրան նրան ծախում: Ում մօտ որ այս մատնիքներից գտնուեցաւ, կայծակը նրան ամենեկին չի խփէ ու չարերն էլ չեն մօտենայ:

23, Համբարձման տօնի գիշերը՝ բոլոր բնութիւնը կը լուռի. ծովերի, գետերի, առուների ու աղբիւրների ջրերի հոսանքը կամ գնացքը մի առ ժամանակ կը դադարի: Ծաղիկներն ու թուփերը կօկսեն իրար ողջոյն տալ — միմեանց հետ խօսել: Մէկը կտէ, ես այս ինչ ցաւի դեղն եմ. միւսը թէ՛ ես այն ինչ հիւանդութեան բժշկոյն եմ. երբորդն էլ թէ՛ ես էլ այս ինչ օգտաւէտ փոշին եմ և այլն: Ամեն մէկն իրանց ունեցած յատկութիւնը միմեանց հաղորդելով՝ կը դադարեն և բնութիւնը դարձեալ իր առաջին դիրքը կտառնայ. ջրերը առաջուան կարգով կսկսին հոսիլ: Ծաղկների միմեանց հետ խօսելու ժամանակ, եթէ մարդ հանդիպի ու ձեռքի թիակը, բահը կամ գաւաղանը ջրի մէջ դնելով ասէ. — «Աստու հրամանով՝ այս բանը օսկի գառնայ» իսկոյն և եթէ կը փոխարկուի օսկու:

24, Ջատիկ առաւօտը, երբ որ արեւը նոր պիտի մօրից դուրս գայ, եթէ լաւ նկատես՝ կը տեսնես որ, սովորականից դուրս, յանկարծ մի քանի մըրախարայ ցատկելով՝ դուրս կը թռչի, և ՚ի պատիւ սուրբ Յարութեան, երկու ամբողջ ժամ անշարժ կանգնելով՝ աշխարհի չորս կողմին բարեկտայ ու Քրիստոսի սուրբ Յարութիւնը արարոց աշխարհին աւետելով, նորից կսկսի առաջ գնալ: Այդ է պատճառը, որ Ջատիկ օրը միւս օրերից երկու ժամ աւելի երկար է:

25, Այժմ այլ ես վախ ու երկիւղ չկայ, բարեկամ, այդ գազանի — արջի ընին մօտենալու. որովհետեւ, Աստու հրամանով նա քառասուն օր «չլայ» է մտել: Քսան օր մէկ կողքի ու քսան օր էլ միւս կողքի վրայ պիտի պարկի: Երկնուց մանանայ կիջնի նորա թաթերին և նա լիզելով կը կշտանայ: Այս բոլորն էլ եթէ նորա գլուխը տըրեւս ու ջախջախեա՝ ամենեկին տեղից չի շարժի, ըստօրում քառասունից մէջ է ու գառան ընաւորութիւն է ստացել:

26, Մօտիկ հարեանի հարսը նոր ծննդեան է եղել, դիտի տակը «համայրի» ու «հիպրիանոս» չեն դրել. տան մարդիկն էլ իրանց գործով զբաղուած լինելով՝ «դեն եկել նրա ջիկեարը (լեարդը) տարել է»

և նա իսկոյն աւանդել է հոգին: Այժմ այդ լացն ու թացը նորա մահուան տխուր ողբերգական է, որ կատարում են նրա ցաւակից ազգականներն ու բարեկամները:

27, Արօն գնաց Փռչոտենց ծուռվիդ Սաքոյի քովը, որ «գէլկապ» անել տայ. որովհետև իրանց կովը տուն չի եկել, գիշերը դուրսն է մնացել: Սաքոյ ամին առաւ մանած է թելը, մաքի մէջ գէլկապի աղօթքն ասաց, թելը երեք տեղ հանգոյց գցեց, շերեփը գլխիվայր կապեց սան երեսից ու Արօյին ասաց. «Ե՛կ գնայ չուր լուս արխէին քնի. գլխու չանէքն էման դայիմ կապեցի, օր էլ չուր ծռու տարին ըսկի չի բացուի»:

28, «Եմամն Սաքոյ ամի, քու օճաղն իմ ընկի, քու տղէկներու արեւ սատաղէն էղնի, քու հոգու խաթեր հրմար, գողկապմ էրա. մեր հարսի օսկիք գոյցած տարած են, բալբի թէ բերեն ետ տան». մէկ անգամ լալազին առում էր պառաւ Նանէն: Սաքոյ ամին դադիլն առաւ ձեռքը, մաքի մէջ գողկապի աղօթքը պտպըտաց. դադիլը թաթխեց ջրի մէջ, երեք տեղ հանգոյց գցեց ու Նանէին տալով ասաց. — «Ասու կարող զօրութենով չուր իրիկուն գող կը պատռի ու կը տրաքի. օսկիքն էլ ուր ձեռով բերէ կուտայ՝ դուք ըսկի դարա մ'էնէք»:

29, Ցաւոց — հիւանդութեանց աղօթքները, եթէ աղամարդը աղամարդին սովորեցնէ, նա իւր զօրութիւնն ու նշանակութիւնը անշուշտ կը կորցնէ: Պէտք է որ, կինարմատը աղամարդին՝ կամ աղամարդը կինարմատին սովորեցնէ, որ աղօթքը հիւանդի վրայ ազդէ ու ներգործութիւն ունենայ: Հակառակ դէպքում, աղօթելը ապարդիւն կ'անցնի ու դատարկ:

30, Աքաղաղը սովորականից դուրս — անժամանակ կանչեց: Ահա մի կողմից էլ անիծած հաւը կանչեց, միւս կողմից էլ անպիտան շուներ կտրան վրայ նստած ոռնաց: Սրանք շատ վատ նշաններ ու գուշակութիւններ են: Չատ անգամ փորձուած է, որ անշուշտ տան գլխին մի մեծ փորձանք ու վնաս կայ կատարուելու, կամ թէ չէ՝ այդ տանից մի մտդ պէտք է մեռնի:

31, Տես թէ շներն ինչպէս իրար յետեից ոռնում են. — «Ասսու աջն ու խաչը մեր տան ու դռան վրայ էղնի. մահն էկել է մահլէն ման կուգայ, տեսնես էլի ո՛ւմ տունը պըտի աւիրէ ու առնի էրթայ»:

32, Աչքը, ականջը, յօնքը եթէ խաղաց՝ անշուշտ մէկ բարի կամ չար բան պէտք է պատահի: Իսկ եթէ «անկաջը կանչեց»... Խէբ, Խէբ, անկաջս խորունկ կանչեց, հեռու տեղից մարդ յիշաց... աղբէրս է, հէրս է, քեռիս է, Գիրակոսն է, Փիլոսն է...: (Որ բառը արտասանելիս որ ականջի ձայնը կտրուեց, յիշողը նա էր):

33, Ում մօտ որ «գլխու մազ» գտնուաւ կամ պահուած եղաւ, նրա

բաղդը թէ առուտուրի մէջ, թէ դատաւորի և թէ ամեն մարդի մօտ բանուկ ու կտրուկ կ'ընի: Դրա համար է որ առած են արել ու ասում են. — «գիրի մնդ կայ վրէն...»:

34, էս կնիկը որ անցաւ գնաց, ցոյց տուեց Աբօն, մեր զրկցի հարսն է. ըստուց քառասուն տարի առաջ, մէկ գիշեր մերկ դուրս կելնի թէ չէ՝ երկնուց գաղանի շապիկը կիջնի վրէն, էղաւ մարդագէլ ընկաւ սարերն ու քարերը: Գիշերները, որ փակած դռան քովն որ էրթար՝ Աստու հրամանքով ինքն իրան—կընկի վրայ կը բացուէր. ներս կը մանէր մանտը տղէքը կուտէր ու դուրս կուգար: Մինչև որ հագի շապիկ ետէն չը պատուի՝ գէլութիւնից չի պրծնի: Օխտը տարի գէլութին էրաւ: Մէկ օր էլ կերթայ ոչխրգոմը քանիմ հատ ոչխոր կուտէ. դուրս գալու վախտը շապիկը կընկնի դռան կեռին կը պատուի, էն պրծնելն է՝ որ պրծաւ սէֆիլ օղլուշաղը: Գէլ վախտուայ պատմութիւններն որ կենէ՝ մարդու միսը կը սոսըռայ ու մագերը գլխու վրայ բիզ բիզ կէղնի:

35, Նայր թէ, այս երեխի շինքից ինչ սիրուն—գոյնզգոյն ու խառնափիկ ուլունքներ է քաշ արած: Դրանք հասարակ ուլունքներ չեն, ոչ էլ զարդի համար է: Որը աչքի հլուն է, որը ծմբահլուն, որը թպղահլուն է, որը գեղնահլուն է, որը իլանձղի հլուն է և որն էլ չար աչքի կամ չար նազարի: Այդ ուլունքներից ում վրայ որ գըտնուի՝ նրան չար աչք, չար նիաթ չի դիպչի. ամեն տեսակ չար նաֆասից անվնաս կը մնայ:

36, Աբօյի երեսն ու գլուխը որ ալեխառն սպիպակ է, ոչ թէ հասակի մեծութիւնից է, ոչ. նա դեռ ևս շատ մեծ չէ, այլ խաղնի վրայ է պարկել, կամ չար աստղի տակ ծնել, որ իրանց ազգեցութիւնը թողել են նրա մազերի վրայ:

37, Անձրեկից յետոյ, երբ Աղեղը կը դիպչի, եթէ մէկը նորա տակից անցնի, կամ կարողանայ ծայրը պագել, եթէ տղայ է՝ աղջիկ կը դառնայ. եթէ աղջիկ է՝ տղայ: «Աբարանու Մ. գիւղի չօբանը մէկ անգամ Աղեղնակի տակէն անցել ու աղջիկ է դառել»:

38, Արև ժամանակ եթէ անձրեկ գայ, գէլ կը ցընկնի—կամ մարալ կը ծնի, որ գաղանի ձագը կամ կենդանու հորթիկը չ'մրսին:

39, Անձրեկ գալիս, կամ անձրեկից յետոյ, վիշապը երկնքից կախ կընկնի ու միշտ կաշխատի իր պոչը գետնին հասցնել, որպէս զի աշխարհք տակ ու վրայ անէ: Բայց հրեշտակները նրա գնչից բռնած միշտ վեր են քաշում ու չեն թողնում որ ցած իջնի: Ամպի միջի այն սաստիկ գոռգոռոցն ու օրոտումը նրա վերեւ քաշելու ազդակն ու շղթաների ձայներն են:

40, Անձրեկ ժամանակ քարափների տակ ու այրերի մէջ մտնել

պատասխարուիր շատ վտանգաւոր է. որովհետեւ չարը դիտէ, որ կայ-
ծակը պէտք է իրան խփէ՝ այդպիսի ժամանակ գալիս մտնում է մար-
դի փէշերի տակ, որ կայծակը խփելիս ինքն ազատ մնայ: Այդ է պատ-
ճառը, որ կայծակը երբեմն խփում է այն մարդկանց, անասուններին
ու քարափներին, որոնց տակը չարը պահ է մտել:

41, «Արեգակի երեկոյեան վերջալոյսը «մեռելի փայ արեւն է», որ
նսեմ ու աղօտ լուսով խոնարհում է մայր մտներ: Արեւ մայր մտնե-
լիս, մտնում է ծովը և տպա նրա տակից շրջան առնելով, արեւելեան
կողմից դուրս է գալիս մեր աշխարհքը:

42, Լուսնակն օխտն անգամ թէ գեղեցիկ ու թէ լուսով է արե-
գակից. բայց երկուսի մէջ եղած տարբերութիւնը նրանից է, որ բոյ-
րը (լուսինը) չի ուզում եղբօրը նսեմացնել աշխարհքի առաջ. դրա
համար էլ «օխտը դաթ քօղով ծածկել է երեսը»:

43, Մէկ տղայ, թէ որ քօռիգան է, քնելիս նորա բարձի տակ
հաց պէտք է դնել ու «առաւօտեան տալ սև շանը» որ ուտէ: Այս բա-
նը երեք անգամ կրկնելով՝ տղայի իղանը տեղը կուգայ ու կ'իջնի
ընդունակ և յառաջագէմ:

44, Երեքնուկ բոյսի մէջ, եթէ գտնեն մէկը, որ չորս տերեւ ունե-
նայ ու դնեն փողի քսակի մէջ, այնուհետեւ ինչքան առատութեամբ
որ ծախսեն, երեկոյեան դարձեալ աներեւոյթ կերպով փողը կը վե-
րադառնայ տիրոջ մօտ: Իսկ եթէ հնար լինի «քիմիա» կոչուած խո-
տից գտնել ու դնել քսակում, էլ բանից պրծար. որքան կուգես չը-
ռայլաբար ծախսէ, դարձեալ քտակումդ փողը կայ ու կայ—անսպա-
ռելի ու անհատների կը լինի:

45, Եթէ ուզում են, որ հիւանդը շուտով առողջանայ, պէտք է
նորա բաժին կերակուրից ուրիշներն էլ ուտեն:

46, Եթէ մէկը ցանկանում է, որ իր ճանապարհորդը գնացած տե-
ղից շուտ վերադառնայ, պէտք է նրա ճանապարհի պաշարից, նախ
քան գնալը, գողանան ուտեն:

47, Նորահաս տղերանց ու աղջկերանց չափաւորութեան և քա-
ղաքավարութեան օրէնքներին ծանօթացնելու համար՝ ասում են.—
«ով որ կերակրի ամանի տակը լպտէ, նրա հարսանիքի օրը սաստիկ
բուք ու բորան կը լինի»:

48, Խարբուղ ընկած մարդը, երեք օր իրար վրայ, օրը մէկ ան-
գամ, թէ որ գլուխը դէպի յետ ծռէ ու թքելով ասէ «խարբուղս ան,
սաղութենս տնւր» կազատուի ցաւից:

49, «Քրողը նախընտն ջողանի էրեսը, ասում էր նանէն, աչքը էն-
պէս գէշ է, ինչ բանի որ աչք տնկեց՝ տեղոց տեղ կը տըաքի՝ էրէկ
եղ հալելուս էկաւ տեսաւ. ոտքը դռնէն դեռ դուս չը դրած՝ էն սհա-

Թին եղի գնդանը շախալամիշ էղաւ: Դրողի տարածի ոտքն էլ շատ ծանար է. անցած օրը ջահրիս տակը նստայ Թէ չէ՝ մէկ էլ տեսնիմ ներս մտաւ. գալուն պէս՝ գիտես Թէ սատանէն նստաւ ջահրիս վրայ: Էդ օրը մինչի իրիկուն անջաղ Թէ ձեռիս իրեք քուլէն մանեցի պրծայա:

50, Լուսնի երեսի բծերը նրանից է, որ մէկ անգամ մայրը խմոր հունցելիս, լուսինը գնացել է մօտն ու մի ինչ որ բան է ուզել. բայց խնդրածը չ'ստանալով՝ սկսել է ԹնկԹնկալ ու լաց լինել: Մայրը չ'համբերելով որդու այդպիսի վարմունքին՝ ձեռքով ապտակ է խփել նրա երեսին: Այդ պատճառով էլ մինչև այսօր խմորի բծերը երեսի վրայ տպուած մնում են:

51, Մի պառաւ, գիշերը Թելի կծկի նման ձեռքն է առել ու անդադար բաց է Թողնում, որ գիշերը երկարի ու ամենևին լոյս չը լինի: Իսկ մի ուրիշ պառաւ, նորա բաց Թողած կծիկը արագութեամբ կծկում է, որ լոյսը շուտ բացուի—ցերեկ լինի:

52, Արարոց աշխարհքը մէկ եղի կոտուշի վրայ է շինած. երբեմն այդ եղի կոտուշը որ սկսում է եռ գալ՝ նա գլուխը ցնցում է ու Թափ տալիս՝ որ դինջանայ: Այդ իսկ ցնցումից աշխարհք ժաժ է դալիս ու երկրաշարժ լինում:

53, Աշխարհի ստեղծման օրից, երբ օձը Ադամին խաբեց. Աստուած օձին անիծելով ըտաւ.—«քանի որ աշխարհք կայ՝ բոլոր օրերուդ մէջ հողը զսղանիաթ (խնայելով) ուտես»: Այն օրից մինչև այսօր, օձը հողը միշտ խնայելով է ուտում, որ չը հատնի:

54, Վիշապներն առաջ աշխարհքի մէջն են եղել ու սկսել են մարդկանց ուտել և ամբողջ գեղեր բնակիչներով միասին կուլ տալ: Այս բանը Աստուած տեսնելով, բոլոր վիշապներին լցրել է մէկ մեծ այրի մէջ ու դուռը ամբացրել: Այստեղ էլ հանդարտ չեն կացել. մէկ անգամ կռնակները դէմ են արել, որ սարը շրջեն—դուռն գան ու աշխարհք տակնուվրայ անեն: Աստուած էս բանը տեսնելով, հրամայել է հրեշտակներին, որ գութանի բնատէնից հաստ զընջիլներով կապեն ու քաշեն երկինք: Հիմա ամպը որ գոռում է, այդ վիշապների ձայնն է, որ գոռալով ուզում են շղթաները կտրատել ու դուռն գալ, որ աշխարհքին վերջ տան: Դրանք երբ գոռգոռում են, Աստուած իր ձեռի «կրակ է դամչին» (փայլակը) Թափ տալով սպառնում է՝ որ լռեն, եթէ ոչ՝ բոլորին մէկ վայրկենում կ'ոչնչացնէ: Այդ երկիւղից սասա՛նում են ու լռում:

55, Մեղանից առաջ մարդիկն աղբայէլ (հօկայ) են եղել, այնպէս որ մեր հինգ մարդը նրանց մէկի չափ հազիւ լինէր: Մեղանից յետոյ էլ պիտի գան «Հաջուջ - Մաջուջները», որ նրանց տառը մարդը՝ մեր մէկի չափ պէտք է լինի: Սրանց գալուց յետոյ երկիրը տակնուվրայ պիտի լինի ու աշխարհքը վերջանայ:

56, Լուսինը երբ մէկ կամ երկօրեայ է՝ «նոր» կանուանեն. և առաջին անգամ տեսնելիս՝ երեսները կ'խաշակնքեն. Այդ քաղէին ում երեսը որ նայեցին՝ կասեն. — «Նորի հետ քու երեսդ տեսայ, տեսնեմ գործս կ'աջողի թէ ոչ»: Նոյնպէս նորա դիրքից ուրիշ գուշակութիւններ էլ կանեն. «Նորը պողին է ընկած, այս ամուսն չոր կանցնի. կոմ կանակին է պարկած, անձրեային կ'լինի»:

57, Երաշտ տարինները փոքրիկ տղայք փայտի վրայ քուռներ փաթաթած — «պուրպատիկին» (նուրին-նուրին) կ'շինեն և երկու մանուկ բռնած՝ դռնէ դուռ ման կածեն: Իւրաքանչիւր տանտիկին մի թաս ջուր ցփնելով պուրպատիկինի և շրջողների վրայ՝ յետոյ մի բան կտայ, հաւկիթ, եղ, հաց կամ այլ ինչ: Այդ ժողոված իրեղէնները ծախելով, նոցա զնով մատաղ, խունկ, մոմ կառնեն ու տեղական եկեղեցում կ'վառեն, որ անձրե գայ:

58, Մի գործի մասին խօսելիս, կամ գործ սկսելիս, և մինչև անգամ որ և է բանի վրայ խորհելիս, թէ որ մէկը զոյգ փռնդտաց՝ «Չհատ է կաւ, իշալլահ գործներս աջող է կասեն. թէ որ մէկ անգամ փռնդտաց՝ — «սարբ» է, Աստուած խէքն ու բարին կատարէ. Իսկ եթէ ճրագ-վառցին մէկ հատ փռնդտաց՝ այն ժամանակ — «ճրագի հետ ջուլտ է» կասեն... Աստուծով բարի կ'լինի:

59, Թէ որ մէկը ձիով ճանապարհ գնալու լինի և նրա համար «գալտական փորձանք գայ՝ ձին իմաստուն հայկան է, առաջուց կիմանայ ու իրան դուրս քաշելիս՝ չի ուզէ ախուրից դուրս գալ»: Մինչև անգամ, եթէ ծեծելով յակամայից դուրս բերեն, նա յայտնապէս կուլայ — կարտասուէ ու վտանգ գալը կիմացնէ:

60, 2ար հրեշտակները երբ Աստուծոյ դէմ արտամբեցան, իրանց այդ չարութեան համար Աստուած երկնքից վայր թօթափեց ու երկրի անդունդներում բնակութիւն հաստատեցին: Իսկ նրանց մէկ դասը երկնքից կախ ընկած մնացել է մինչև այսօր. այդ պատճառով կիրակնուտ երեկոներին եկեղեցիներում «Գեցո Տէր» են ասում, որ նրանք էլ չ'թօթափին վայր ու իրանց ընկերների հետ միանան աշխարհքին վնասելու:

61, Աստուած աշխարհքի չորս կողմը, չորս հրեշտակներ է կանգնեցրել, որ իւրաքանչիւրը մի կողմից քամի են փչում: Իսկ բարակ դեփիւտը, որ շնկշնկալով գալիս է ու մարդի երեսին դիպչելով անցնում, նրանք քնած ժամանակուայ շնչի հանդարտ տուրեւաութիւնն է:

62, Սողոմոն իմաստունը, որ տեսաւ թէ դեբըը հակառակ են ու իր կամքը չեն կատարում, բոլորին լցրեց պղնձէ կուժերի մէջ ու բերանները ամուր փակելով, իր մատանիքով կնքեց ու թափեց ծովը: Այդ չարերը այնքան պէտք է մնան ծովում, մինչև որ Քրիստոս դատաստան գայ:

63, Այս տարի ամենեկին անձրեւ չի եկել և բոլոր բուսականութիւնը երաշտութիւնից չորացել ու աղբիւրների առունների ջրերը ցամաքել են: Դրա պատճառն այն է, որ «կախարդները իշի չորացած գանգի վրայ իրանց կախարդական գիրը գրել ու գցել են գետը»:

64, Սոդոմ Գոմորը երբոր Աստուած հրով ու ծծումբով այրեց, բնակիչները անառակ վաքի ու բարբի համար, նոյն օրից մինչև այսօր՝ այդ տեղերից գարշահոտութիւնը բուրում է ու ծուխը անվերջ դուրս գալիս:

65, Մուղանչադրադու ձորը առաջ գիւաց բնակարան է եղել, այնպէս որ՝ դրա մօտով մարդ չի կարողացել անցնել: Մէկ օր հրեշտակը ճգնաւորին թեքի վրայ նստեցրած՝ բերում ու այդ դեերի գլխին կանգնեցնում է: Ճգնաւորը մէկ երկու խօսքով դրանց անիծում է թէ չէ՝ բոլորը իսկոյն աներևոյթանում են: Մինչև այսօր էլ ճգնաւորի գերեզմանը այնտեղ է:

66, Տեսիլք գնացող տիրացու Յօհանը պատմում էր որ, թէ և կրակը դժոխքից են առել աշխարհք բերել, բայց էլի դժոխքի կրակը եօթն աստիճան աւելի թէժ է մեր կրակից: Որովհետեւ, կրակը աշխարհք բերելիս՝ «օխտը ջուր լուացել» յետեւ են բերել, որ իրան սաստիկ թէժութիւնով մարդու շատ չը վնասէ:

67, Ով որ անդգուշութիւնից աղը գետին թափէ, դատաստանի օրը այն թափած աղը պէտք է իրան աչքերի թերթերունքներով ժողովէ ու տեղը լցնէ:

68, Մարդ զոռնկները կտրելիս, մազերը խուզելիս ու ցաւած առամը քաշելիս, պէտք է հետեւալ խօսքերն ասէ. - «դատաստանին հետս արէք». և գետինը փորելով՝ առաջին երկուսը հողի մէջ թաղէ, իսկ վերջինը տանի եկեղեցին ու սան ճեղքուածի մէջը զարկէ, որ չը կորչին. որովհետեւ դատաստանի օրը իրանից կուզեն. Նթէ չ'կարողացաւ ներկայացնել՝ հուրն յաւիտենական կը տանջուի դժոխքի մէջ:

69, «Մեղայ Քեզ Տէր, մեղայ, ասաց մէկ անգամ նանէն, ընտեղ աչէք թէ՛ շունն ու կատուն կանանչ խոար ինչդ կարածեն. էս տարի ես թանգութեն կեդնի, ես չէ սով»:

70, Տես թէ կատուն ինչպէս հաւարով (շտապօք) իր թաթիկներով երեսը կը լուայ. հա՛մ բրդուճն էլ իմ ձեռքէս թռաւ ընկաւ. անպատճառ էսօր մեր տունը դօնաղ պէտք է գայ: Նկող դօնաղն էլ անպատճառ ձիաւոր է, որովհետեւ Աբօյի ոտնամանի մէկը միւսի վրայ է հեծած:

71, «Աստուած օխտը պօրտէս յետ ու հեռու էնէ. Չամուտենց տղին շարը զարկել է, կը թալկտի. շունքի հող գլուխ մէրը մթանը ջուրը դուս թափելիս «Յիսուս Քրիստոս» չէ էրել»:

72, Կնքահայրը սանամօրը այն ժամանակ միայն պէտք է տեսնի, երբ սանիկը եկեղեցուց տուն է բերում: Նրանից յետ, երբ և իցէ՝ սանամէրը քաւորի աչքին չը պէտք է երևայ: Եթէ յանկարծակի պատահեց որ իրար հանդիպեցան, այն ժամանակ սանամէրը մկան ծակը հարկը թումանով պէտք է գնէ, կամ փոխ առնի ու ծածկուի, մինչև քաւորի հեռանալը: Եթէ ոչ՝ երկինք գետինք օխտը դաթ դող կ'իյնի ու ժաժ կուգայ:

73, Ապրիլի 23-ին «Ծուատօն» է. ով որ աշխատի — գործով զբաղի, նրա քիթը, աչքը, բերանը, կամ մարմնի որ և է անդամը կը ծռի: Մէկ տարի այդ օրը Աբօյներ ականջ չեն արել, գնացել են չուլթը՝ նոյն օրուայ ցանած ցօրենների բոլոր հասկերը ծռուել՝ գլխիվայր են բռնել: Նոյնպէս և գոմէշի շլինքն էլ է ծռուել: Իսկ Նանէն, որ այդ օրը լուացք է արել, դրանից մի ամիս յետոյ՝ ծնուած երեխի ոտքերն ու քիթը ծռու են եղել:

74, Թուրքերն ու Քրդերը լողանալիս, նրանց մարմնի վրայ ջուրը պտուղ — պտուղ (կաթիլ — կաթիլ) չի կանգնում. պատճառն այն է, որ նրանք թէ քրիստոնեայ չեն և թէ Մեռնով չեն մկրտուած:

75, Եփած հաւկիթը թէ որ սառը ջրի մէջ գցես՝ կարկուտ կը գայ: Նոյնպէս հոտած հաւէիթը, եթէ արևի մէջ կտրես՝ կարկուտ կը գայ:

76, Թըթխմօրը դրացին տանելիս՝ պէտք է ծածկէ՝ որ «արև չը գիպչի վրէն. եթէ ոչ, լսէր ու բարաբեաթը միջից կերթայ և խմորը չի թթուի, այլ կը հոտի ու կ'որդնոտի»:

77, Գիշեր ժամանակ թըթխմօրը դուրս չեն տայ, որովհետև՝ «մէկ հաւկիթի չափ վրայից կը պակսի»:

78, Մաղադործների թըթխմօրը չի թթուի. ոչ էլ նրանցից մէկը կարող է քահանայ լինել, որովհետև «անիծած ազգ են»:

79, Ռումիկ կանայք երեխանց լացը կտրելու կամ չարութիւններից ազատ պահելու համար, հետեւալ անունները տալով. — «Տօճի պառուն էկաւ քեզի կը խեղդէ». «Ղալմուղն էկաւ քեզի տանելու». «Երջ կատուն կուգայ քեզի կուտէ». «Քօրօլը Խաչօյին տաբաւ». «Մուկը Գիրգօրի անկաջը խածեց». «Պատանէն դառն յետևը կայնել է, որ քեզի տանի» և այլ այսպիսի հազար ու մէկ հրէշային և անհեթեթ խօսքերով սպառնալիք ու երկիւղ են պատճառում երեխանց, որ լացից ու չարութիւնից զգոյշ մնան:

80, Երեխան նոր ատամներ հանելիս, հէնց առաջին ատամը որ դուրս է գալիս՝ «ակուհատիկ» են անում ցօրենից ու երեխի գլխին ածում, որ մնացած ատամները չուտ ու հեշտութեամբ դուրս գայ:

81, Հարսանեաց, ննջեցելոց յուղարկաւորութեան և նոր մկրտեալ երեխի եկեղեցուց տուն տանելու ժամանակ, ճանապարհի վրայ զբա-

նուած տների նոր հարսներին ու նոր ծնած մանուկներին իսկոյն դուրս են հանում, որ «կոխ» չը լինին, այսինքն շենթարկուին որ և է փորձութեան կամ վտանդի:

82, Ալաշկերտի և Մշու գաղթականների մէջ դեռ ևս սովորութիւն կայ, որ գլուխը թրաշկիւս, գագաթի մէջ տեղը 5 կոպէկանոցի մեծութեամբ կլոր վեր են անել ապիւս ու անուանում են «կալա» (ձատերից լսել եմ, որ արեւի փոխանակ են ընդունում): Իսկ այդ կալի շուրջը գտնուած մազերը — բըջամները թողնելով՝ միւս մնացած բոլոր մազերը մաքուր վեր կանեն:

83, Մեծ Ջատիկից անմիջապէս յետոյ, գիւղերում սովորութիւն կայ, որ ամեն հինգշաբթի օր — մինչև Համբարձման տօնը — անխափան կիրակի են պահում ի պատիւ Եղիայ մարգարէին, որպէս զի կարկուտ չգայ և իրանց անդաստանները փշացնէ: Այդ կիրակին կոչվում է «Կարկտի կիրակի»: Ժողովուրդը հաւատում է, որ կարկուտը, անձրեւն ու կայծակը յիշեալ Մարգարէի իրաւանց տալն են, և նա երբ որ կամենայ՝ այն ժամանակ կը հրամայէ նրանց վեր գալ երկրի վրայ:

84, Կարկուտ գալիս, եկեղեցեաց զանգալները հնչեցնում են. որով ժողովուրդը ցոյց է տալիս իւր արթնութիւնը, և աղօթելով դէպ առ Աստուած՝ իւր ունեցած հաւատքը: Մի և նոյն ժամանակ «խաչըրկաթները» դուրս են ձգում, որ կարկուտը կտրուի ու փոխարկուի անձրեւի և արեւի:

85, Փոքրիկ երեխի լեզուն եթէ ուշ բացուեց, կնքահօր թաշկինակը կամ ոտնամանը երեխի բերնին են քսում, որ շուտով լեզուն բացուի — խօսի: Կամ թէ չէ՝ եկեղեցու դրան բանալին բերանն են քաշում. և կամ մի մեծ մարդու, այն է՝ եպիսկոպոսի կամ վարդապետի աջը համբուրել տալիս ու նրա թաշկինակով բերանը որբում, որ շուտ լեզու ելնի խօսի:

86, Եթէ երեխան սովորականից ուշ ոտք ելաւ, մի սրբի, նահատակի, կամ վերան լոյս իջած արդար մարդի գերեզմանի վրայ երեխի ոտքերը երեք անգամ լուանում են ու մի ապակեղէն անօթ՝ գերեզմանաքարին խփելով փշրում, որ շուտ ոտք ելնի:

87, Կանանցից մէկը «թպղահլուն» կամ «բաբաղուկի» է պահում մօտը, որ իրա երեխաները մնացական լինին ու չը թալցնեն. բայց նա, սր նորածին երեխայ գտնուած տունը որ մտաւ ու նստեց ծընըդկանի անկողնի վրայ՝ մի քանի ժամից յետոյ՝ էլ «երեխան տիրոջը խէր չունի», կսկսի ամբողջովին սեանալ թալկալի (նուաղիլ) ու. մի քանի բոպէից յետոյ մեռնիլ:

88, Երեխի թեկին կամ վզին մի քանի հատ «ծմրահլուն» է կապած, որպէս զի նրա վրայ գտնուած «ծմրուկները» (մանր փշանման

վէրքեր կամ կոծիծներ, որ գլխաւորապէս թիկունքի վերայ են դուրս գալիս ու բոքի նման բոք գալով՝ տանջում են խեղճ երեխաներին)։
կորչին — անհետանան։

89, Նորապսակ փեսան, երբ բարեկամների ու զրացիների տներն է մտնում՝ տանտէրերը նրա վերայ ալիւր են շաղ տալիս, որ տունը չը մկնոտի»։

90, Տղէն նշանուելու կամք չունենալիս, «չերեփը տանում սանիցն են կապում»։ Կանոնատե արնալէս է խելօքանում, որ բնաւ ձայն չի հանում, թէ կուզ ինչ էլ որ անես։

91, Ազգականից կամ բարեկամից, որ երկար ժամանակ նամակ, կամ որ և է տեղեկութիւն չունենաս, «վարտիքդ տար թնորի ակը կօխէ» մի երկու օրից յետոյ կամ նամակ կտանաս՝ կամ տեղեկութիւն կունենաս։

Ե Ի Ը Ն Գ Յ Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ի

1, Տակաւին ժողովրդի բերանում մի երկու աւանդութիւններ են պտըտվում մեր Տէր Յիսուս Քրիստոսի մասին։ Նախ՝ իբր թէ երեխայ ժամանակ Քրիստոսին տուել են «ներկարարի» (բօյախչու) մօտ աշակերտ։ Մի օր վարպետը տեղ գնալիս, թիւ է յանձնում Քրիստոսին ու պատուիրում, որ մինչև իւր վերադառնալը ներկէ—պատրաստէ, որպէս զի թեկի տէրը գալիս՝ տան իրան։ Թեւը ներկում է։ Գալիս է վարպետը, նոյնպէս գալիս է և թեկի տէրը, որ տանի։ Բայց ով հրաշք մարդը որքան է զարմանում, երբ տեսնում է, որ թեւերը իւր ասած գոյներով չեն ներկած։ Զօրօրինակ. եթէ նա պատուիրել էր կապոյտ ներկել՝ ընդհակառակը սրանք դեղին են ներկել։ Վարպետը բարկանում է աշակերտի վրայ և ուզում է ծեծել։ Բայց նա փախչում է դուրս։ Վարպետը բարկութիւնից տոփանը (թոխածը) քցում է նրա յետեից, որ քարին դիպչելով՝ կոտորում—երկու կտոր է լինում և իսկոյն ընկած տեղը երկու ծառ դուրս գալիս, որ մինչև այսօր պաշտվում են։ Վարպետի բարկութիւնը իջնելուց յետոյ, աշակերտը իւր սխալն ուղղելու համար, նորից գալիս է ու նրանց ներկայութեամբ, թեւը նորից քաշում է կարասի մէջն ու իսկոյն դուրս բերում

կարմիր գոյնով: Վերջապէս ներկելը մի քանի անգամ կըրկնում է մի և նոյն կարասի մէջ, բայց ամեն անգամ մի ուրիշ գոյն է ստանում թելը: Հոսկ ամենայնի, վերջին անգամ մարդի ուզած գոյնովը ներկում է ու տալիս իրան: Այս հրաշքը վարպետը տեսնելով— «ես չեմ կարող ինձանից հազար անգամ բարձր վարպետին աշակերտ պահել ինձ մօտ» ասում է՝ ու իւր մօտից արձակում հրաշագործ աշակերտին: Գուցէ այս աւանդութիւնից է առաջ եկել բօյախանի կարասին ուխտ գրնալը, որ մեզ աւելի հաւանական է թուում:

2, Ներկարարութիւնից դուրս գալուց յետոյ, իբր թէ՛ մտնում է հիւսնի մօտ աշակերտ: Մէկ անգամ վարպետը գերանի չափը տալիս ու պատուիրում է, որ իր նշան արած տեղից կտրէ: Բայց Քրիստոս ընդհակառակն երկու թգաչափ որոշած տեղից կարճ է կտրում: Երբ վարպետը գալիս է ու գերանը ուզում են տեղը դնել, ո՞վ անբաղդութիւն, տեսնում է որ չափից կարճ է կտրած, սկսում է բարկանալ աշակերտի վրայ: Բայց Յիսուս աշակերտը, տեսնելով վարպետի բարկութիւնն ու նեղսրտութիւնը, գերանի ծայրից բռնում քաշում է և մեղրամոմի նման երկարացնելով՝ տեղն է դնում ու դառնալով դէպի վարպետը՝ ծիծաղադէմ ասում է.— «Իւր է թէ կարճ է»: Սա էլ այս հրաշքը տեսնելով՝ առաջին վարպետի նման, քաղցրութեամբ իւր մօտից արձակում է ամենագէտ ու հրաշագործ աշակերտին:

3, Մէկ անգամ մի դուրգար գոգը փող լցրած տուն տանելիս, ճանապարհին պատահում է Քրիստոսին, որը հարցնում է թէ՛— «գոգիդ լցրածն ինչ է»: Դուրգարը նրան խաբելով՝ պատասխանում է թէ՛ «տաշեդ» է: Քրիստոս իսկոյն վրայ է բերում.— «Աստուած ձեր տաշելին բարաքեալ տայ»: Մի և նոյն ժամանակ մի դաբաղ (խաղախորդ—կաշեգործ) գոգով ներկ տանելիս է լինում: Սրան նոյնպէս հարցնում է թէ՛ «տարածդ ինչ է»: Նա էլ համարձակ պատասխանում է որ՝ «փող»: Քրիստոս ասում է. «Աստուած ձեր փողին բարաքեալ տայ»: Այդ է պատճառն, ասում են, որ դուրգարի տաշեղն է չաւտ, իսկ դաբաղի փողը:

4, Ժողովրդի մէջ աւանդութիւն կայ, որ իբր թէ մէկ անգամ երեկոյեան պահուն՝ Յիսուս ծերունու կերպարանքով հիւր է լինում մի ապքատ մարդի տան. բայց խստասիրտ տանտէրը ներս չի ընդունում. Իսկ նրա բարեգութ կինը խլկալով նրա վրայ, մարդիցը ծածուկ, տանում է ակոռն ու մսուրի մէջ պահում, որ միւս օրը ճանապարհ ձգէ: Մի քիչ հաց ու ջուր է դնում մօտն ու թողնում հեռանում: Գէս գիշերին մօտ, այդ կնոջ մարդը փորայաւից այնպէս սաստիկ սանճու է ընկնում տանջվում, որ գետնի վերայ թապալ տալով, քիչ է մնում որ երկինք գետինք պռճոկէ: Գինը տեսնելով որ մարդը ձեռից գնաց, հոգին աւանդում է, վազում է ծերունու մօտ ու յայտնում մարդի դրութիւնը: Քրիստոս բարի դէմքով ասում է նրան. «գնա, ագնիւ կին, մարդիդ ոչինչ չկայ, նա առողջ է»: Այս խօսքի վրայ գնում տեսնում է, որ մարդը բոլորովին առողջացել է: Իսկոյն վերադառնում է որ շնորհակալութիւն յայտնէ իւր բարի հիւրին, բայց տեսնում է որ ծերունին չկայ: Մարդ ու կին նոր իմանում են, որ իրանց հիւրը Քրիստոսն է եղել, բայց էլ ինչ օգուտ որ դադարը չեն իմացել:

5, Աւանդութիւն կայ, իբր թէ ս. Գէորգը իւր մատը դրոշմել է մեղրամոմի վրայ և այդ մատամբ դրոշմած «Մատներհարը» մինչև այսօր կայ ու պաշտվում է իբրև սրբութիւն և մասունք: Ժողովուրդը նոյնպէս առանձին նշանակութիւն է տալիս Տեառնընդառաջի տօնի երեկոյեան վառած մոմերին ու քառասնից մանկանց տօնի օրուայ լիճքի ձէթին, որոնք փրկարար միջոցներ են համարվում:

6, «Աստուածածնայ թաթը», որ սև կեղևով, մանրիկ ու խճճուած ճղներով մի բոյսի արմատ է, և ուխտաւորները նրուսադէմից հետներն են բերում, նրա մասին հետեւեալ աւանդութիւնը կայ: «Աստուածածին Քրիստոսին ծնանելիս, երկանց մէջ եղած Ժամանակ, ձեռքը գցել այդ բոյսից բռնել է ու իսկոյն ազատուել: Այդ պատճառով էլ այժմ այդ արմատը ձրգում են ջրի մէջ ու տալիս են խմելու այն դժուարածին կանանց, որոնք օրերով երկունքի մէջ տանջվում ու տապալկվում են, որ շուտ ազատուին իրանց ցաւից:

7. «Աստուածածնայ կաթը».—Սա էլ սպիտակ գունով մի փխրուն քար է, որ ջրի մէջ քսելով մասամբ լուծվում է ու ջուրը կաթի գոյն ստանում, որը տալիս են խմելու սակաւ կաթ ունեցող կանանց, որ կաթները առատանայ։ Սրա մասին հետեւեալ աւանդութիւնը կայ ժողովրդի մէջ։ Աստուածածնի կաթն այնքան առատ է լինում, որ Քրիստոս ծծելով չի կարողանում սպառել։ այդ բանից ստիպուած՝ օրը մի քանի անգամ Աստուածածինն այրի մօտ, մի որոշ տեղ, կաթը միշտ կթելիս է եղել, որ ծծերն հանգստանան. դրանից էլ գոյացել են այդ փխրուն—կաւիճանման քարերը, որ Նրուադէմ դնացող ուխտաւորները հետեւեքը բերում են ու ժողովուրդն էլ գործ է ածում։ Այս երկու սրբութիւններն («Թաթըն» ու «կաթը») ունեցողներն առանց գրաւականի չեն դուրս տալիս. մի յայտնի գրաւական են վերցնում և ապա տալիս, որ ուրիշները չը սեփականեն իրանց։

8. Մաղադործների մասին էլ այս աւանդութիւնն է պատմվում։ Մի ինչ որ Գրիգոր եպիսկոպոս Աղրականդացի, սրբակեաց կրօնաւոր և շատ իմաստուն ու երեկի մարդ է եղել և մէկ քաղաքի առաջնորդ։ Այդ քաղաքի Սաբիոս անուն քահանան, Գեղիսկինտոս սարկաւազը և ուրիշ 12 հատ աշխարհական անձինք նախանձելով եպիսկոպոսի փառքին ու վիճակին, ուզեցել են մի կերպ արատաւորել նրա անունն ու իրան խայտառակել։ Մի օր եպիսկոպոսից ծածուկ, անառակ կնոջ մէկին կաշառելով, բերում ու նրա անկողնակալի տակ պահում են։ Վերջը մի ինչ որ պատճառով եպիսկոպոսին զրպարտում են թէ՛ «դու քեզ ձևացրել ես սրբազան մարդ, բայց մենք քոյ բոլոր զաղտնիքներդ գիտենք»։ Այդ յանդուգն ու համարձակ խօսքերի համար, եպիսկոպոսը երբ դրանց նախատում է, իսկոյն անառակի թեկից բռնած, ծածկուած տեղից քաշում դուրս են բերում։ Խեղճ եպիսկոպոսը այս անսպասելի զրպարտանքը տեսնելով՝ մնում է շուարած։ Իսկ յիշեալ քահանան ու իւր համախոհները, կատարուած իրողութեան անցքի մասին գրում են կաթուղիկոսին, որ եպիսկոպոսին պատժէ ու ապաշխարանքի ենթարկէ։ Բայց եպիսկոպոսը, իրան վրայ բարդուած

գրադարտանքը տեսնելով, սրտի բարկութիւնից, քահանային ու իւր ընկերակիցներին չարաչար անիծում է թէ՛ - «ոչ ձեր ազգը (սերունդը) ուրիշ ազգի խառնուի, ոչ ձեր լեզուն լեզուի և ոչ էլ այսուհետև ձեր միջից քահանայ լինի»։ Առաջին երկուսը (քահանան ու սարկաւազը) իսկայն չարաչար մահով մեռնում են. բայց 12 անձանց մէկ մէկ երեսները ածուխի նման սևանում է։ Երեսների սեռութիւնից պնում են քաղաքից դուրս, մօտիկ անտառի մէջ բնակութիւն հաստատում ու այնտեղ սկսում ծառի ճղներից սալայ, բաղադ դործել և ձիու մազից ու բարակ սրեմից մաղեր հիւսել, որոնց ընտանիքները գալով՝ այդ գործուածքները տանում են քաղաք ծախելու, որ թէ իրանց և թէ անտառաբնակների ապրուստը դրանցով հայթայթեն - հոգան։ Այդ օրուանից սովորութիւն է դարձել, որ մալադործները մուրացկանի նման դռնէ դուռ ման գալով, իրանց ձեռագործները ծախում են ու ապրուստ անում։ Նա և իրանց առանձին բարբառն ունին ու անիծուած է՝ որ իրանց սերունդից ոչ որ չի կարող քահանայ լինել։

Գ. Ե Ր Ա Ձ Ն Ե Ր

Մեռել տեսնելը՝ չատ կապրի։

Սիպտակ առարկայ տեսնելն՝ արդարութիւն է։

Էշ տեսնելը՝ դուլվաթ է։

Գարի, ցորեն տեսնելը՝ խօսք ու զրոյց է։

Օձ տեսնելը՝ թշնամութիւն է։

Օձին սպանելը՝ թշնամուն յաղթել է։

Չուկ տեսնելը՝ շար լեզու կամ վատ խօսք լսել է։

Չուկ ուտելը՝ վնասի հանդիպել է։

Թել կամ չոլան տեսնելն՝ երկար, ճամբայ կը գնայ։

Սև իր կամ առարկայ տեսնելը՝ սգի նշան է։

Արաղ, գինի խմելը՝ տրտմութիւն է։

Սապոն ու աղ տեսնելը՝ կսկիծ է։

Գաղայ և չամիչ տեսնելը՝ կամ ուտելը, հիւանդութիւն է։